

փնտրուելու ու զանոնք ստորագրելու . վաճառականութեան սենեակ, հանգանակ վաճառականաց . մթերանոց ծխախոտի, մթերանոց վառօդի, և այլն :

Զեռագործի ճարտարութիւնը շատ առաջ գացած է Ռուանի մէջ . իրեն զխաւոր վաճառքն է բամբակէ գործուածներ, որոնք մասնաւոր անունով «ռանըրի» կ'ըսուին՝ այս քաղաքին մէջ շինուելուն համար . ետքը կու գան քթանէ ու այլ և այլ տեսակ կերպասներէ շինուած գործածները, յախճապակ, երկաթեղէն կարասիք : Ունի նաև ներկարարութեան շատ գործարաններ, որուն մեծ գիւրութիւն կու տայ Ռուպեզ գետակը, որ քաղաքին մէջէն կ'անցնի . շաքարի զտարաններ, մետաղաց ձուլարաններ, կաշոյ գործարաններ, կտաւ ճերմկցրնելու գործարաններ, և այլն : Իր ծովային վաճառականութիւնն ալ յառաջադէմ է, ու ամէն տարի իր նաւահանգստին մէջ եկող ու գացող նաւերուն թիւը 4,000⁶ կ'ելլէ : Ռուան իրեք կողմանէ Քարիզու, Տիէբայ ու Հաւրայ հետ շոգեկառքի ճամբով հաղորդակցութիւն ու-

նի, որ իր ճարտարութեան յառաջադէմութեանը շատ կ'օգնէ :

Ռուան, որ հիմա 100,000 բնակիչ ունի, Վազզիոյ Յեղափոխութենէն առաջ՝ Եւրոմանտիոյ մայրաքաղաքն էր : Հնուց Ռադումկոս կ'ըսուէր . կ'երևայ թէ Կեսարու ատեն նշանաւոր քաղաք մը չէր, որովհետեւ ամենեկին վրան չը խօսիր . Պաղոմէոս առաջինն եղած է որ Ռուանի վրայ յիշատակութիւն ընէ : 1419 տարւոյն Լ'նգղիացւոյ ձեռքն ինկաւ, ու քսան տարի անոնց իշխանութեանը տակ մնաց . հոս այս քաղաքիս մէջ 1431^ն Վազզիացիք կրակի մէջ այրեցին Յովհաննա Լ'ըգեան օրիորդը, որ զՎազզիա ազատէր էր . շատ ետքը նոյն տեղւոյն վրայ խեղճարձան մը կանգնեցին իրեն : — Ռուան հայրենիք եղած է Սեծին Վառնէյի ու իրեն լծովմաս եղբօրը, որոնց տունը ինչուան հիմա կեցած է . դարձեալ Ֆոնդընէլի, Եստիլընէ նկարչին, Պրիւմուա գրակա նին ու Պուայէլտիէօ երևելի երաժշտին : Լ'յս հռչակաւոր մարդիկներէն երկուքին, այսինքն Սեծին Վառնէյի ու Պուայէլտիէօյի, Սեն գետին երկրթէ գեղեցիկ կամրջին վրայ մէյմէկ արձան կանգնուած են :

1. Գ. Ռ. Rouennerie.

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Դ Է Պ Ք

Հիմնական Արեւելեան պատերազմը : (Տես Հտ . ԺԳ , երես 354)

1854

ՓԵՏՐՈՒՄ

1 Տրուէն ար Լիւի հետեւեալ պատասխանը կու տայ Քիսէլֆ ուսագետականին . (Տ . 25 յունուար) . Կայսերական կառավարութիւնը ուղեց որ իր նաւական զօրութեան ձեռքովը՝ որչափ որ իրեն կարելի է գէշը առնէ պատերազմին ընթացքին , որուն վրայ ինքը ստատիկ վշտացած է : Սակայն գաղղիական նաւախումբը հանգերձ պաշտպանելուն ալ օսմանեան գրօջը՝ պիտի արգիլէ որ Տաճկի նաւերը Ռուսաստանի կայսերութեան ծովեզերեայ տեղերուն վրայ ամենեկին յարձակմունք մը չընեն : Լ'յս նաւերը Ռուսիոյ ու Անատոլիոյ ծովափնեայ կողմանց պաշար տանելու համար միայն պի-

տի ծառայեն . բայց Սե ծովուն մէջ ամենեկին նաւարկութիւն չընելու բացարձակ կերպով արգիլելը օսմանեան գրօշնարուն , գեռ աւելի տկարացրնէլ ըսէլ է այն պաշտպանութեան միջոցները , որ արգէն քիչ կու գան Բարձրագոյն Գրան . (Տես 4) :

Նոյն պաշտօնեայն՝ Վազզիոյ Բեգրպուրի կեցող գետականին այդ պաշտօնադիրը կու տայ . Բեգրպուրիի գահինձը այսօրուան օրս գիտէ թէ պատուաւոր պայմաններով կրնայ խաղաղութիւնը նորէն հաստատուիլ : Մեր Եւրոպիական պնտոսին մէջ մանեւրուն պատճառը այնպիսի չիտիէ չիտակ անկեղծութեամբ իրեն առջևը դրինք , որ կրնայ իմանալ թէ իրեն ձեռքն է անիկայ վերջը . նեւ տալը : Եւ տսիկայ ի գործ կը գրուի , թէ որ ինքը Գանուբեան իշխանութիւններն ու ռուս զօրքերէն գրաւուած Օսմանեան տէրութեան ուրիշ տեղերը պարպելու ըլլայ , և թէ որ Բարձրա-

գոյն Դրան խաւրած լիազոր անձին հետ միաբա-
նական գաշնակցութիւն մը յարմարցնէ, որնոր
նոյն տեղւոյն մէջ քննուի չորս մեծագոյն տէրու-
թեանց խորհրդակցութենէն :

3. Տաճիկները իրեք տեղէ մի և նոյն տանին
մէջ կը ջանան Դանուբը անցնիլ. բայց Ռուսերը
կը հալածեն զանոնք :

4. Մեծին Բրիտանիոյ Վեննա կեցող Ուեսթ-
մորլէնտ գեսպանը հետեւեալ պաշտօնագիրը կը
խրկէ Գլարէնտըն կոմսին. Պուլ կոմսը՝ Գաղղիոյ
գեսպանին և ինծի իմացուց թէ Օուլոֆ կոմսին
Աստորիոյ կայսեր ըրած առաջարկութիւնը այս
էր որ կայսրը Տաճկաստանի ու Ռուսաստանի ի-
րարու հետ ըրած պատերազմին մէջ սաստիկ չե-
ղք կենայ, ուր ընդ հակառակն Գաղղիա ու Ան-
գղիա կ'երևայ թէ մասնակից պիտի ըլլան անոր .
բայց որովհետեւ Ռուսաստան յանձն չառնէր այս
պարտաւորութիւնը՝ որ Դանուբը չանցնի, պա-
տերազմէն ետքը Դանուբեան իշխանութիւնները
պարպէ, ու Օսմանեան տէրութեան երկիրներուն
հիմակուան ունեցած ընդհանուր վիճակը չխռովէ
չայլայլէ, Աստորիոյ կայսրը հաւատարիմ կը մնայ
այն սկզբունքներուն, զոր մէկալ իրեք մեծագոյն
տէրութեանց հետ միատեղ ընդունեցաւ, ու իր
բռնած ճամբուն ընթացքին մէջ կայսերութեան
օգտին ու պատուոյն պիտի նայի :

Քիսլէֆ՝ Բարիզի ռուս գեսպանը՝ կը ծանու-
ցանէ Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնէին որ
ամսոյս 1ին (Տես) տուած պատասխանը ճիշդ
փոխադարձութեան մը պայմանները չեցրներ,
որուն վրայ ինքը պէտք է որ հաստատուն կենայ
ու պահանջէ. կ'իմացընէ որ ինքը գէպ ի Գեր-
մանիա պիտի երթայ և թէ Գաղղիոյ ու Ռուսա-
ստանի մէջ վերաբերութիւնները կարուած են .
(Տես 6) : — Ռուսաստանի Լոնտրա կեցող Պրու-
նով գեսպանն ալ նոյն իմաստով ծանուցադիր մը
կու տայ Գլարէնտըն լորտին. (Տես 8) :

Ռուսաստանի կառավարութիւնը խաղաղու-
թեան նոր առաջարկութիւններ կ'ընէ Աստորիոյ՝
Օուլոֆ կոմսին ըրածներուն նման. բայց Վեննայի
չորս մեծագոյն տէրութեանց խորհրդակցութիւ-
նը կը մերժէ զանոնք իբրև անընդունելի. (Տ. 11) :

5. Տաճիկները Ռուսաճուբի մօտ Դանուբը կ'ան-
ցնին ու Ճիւրճեւոյ քաղաքը կը զարնեն, զոր
Ռուսերը ամրացուցեր էին. բայց Ռուսերը կը
հալածեն զանոնք :

6. Լորտ Ռեսսէլ կը ծանուցանէ Անգղիոյ նուր-
բակներուն սենեկին թէ Մեծին Բրիտանիոյ ու
Ռուսաստանի մէջ վերաբերութիւնները ասկէց
ետքը կարուած են :

Քիսլէֆ պարոնը կ'ըլլէ Բարիզէն :

Վեննայի լրագրոյն իրիկուան թերթը կը ծա-
նուցանէ որ Կայսեր հրամանովը 50,000 աւստրիա-
ցի զօրք պիտի երթայ կայսերութեան հարաւային
արևմտեան սահմանաց ապահովութեանը համար :

7. Գլարէնտըն կոմսը Մեծին Բրիտանիոյ Բե-
զըրպուրկ կեցող գեսպանը ետ կը կանչէ :

8. Ուեսթմորլէնտ կոմսը երկրորդ պաշտօնա-
գիր մըն ալ կը խաւրէ Գլարէնտըն կոմսին, որուն
մէջ կը ծանուցանէ թէ Աստորիա հանգիստպէս
մերժեց՝ Բրուսիոյ հետ միատեղ սաստիկ չեղք
կենալու պարտաւորութիւնը Ռուսաստանի Դրան
հետ ըրած պատերազմին մէջ : Աստորիական կա-

ռավարութիւնը ինքրիկները պարտաւորուած կը
սեպէ Տաճկաստանի անկախութեանն ու ամբող-
ջութեանը վրայ եղած սկզբունքներուն ճիշդ
պահպանութեանը :

Քրիստիանիոյ քաղաքապետը կը բռնայ Կորուե-
կիոյ տասնըջորտերորդ ընդհանուր ժողովը (սոբ-
որթի) . ասոր մէջ՝ յունուարի 31ին թագաւորին
ըրած խօսակցութիւնը կը կարգացուի. Կը յուսայ
թագաւորը թէ այն քաղաքական խառնակութիւն
ներն որ այսօրուան օրս Եւրոպայի խաղաղութիւ-
նը վրդովելու կը սպառնան, մեր երկրին խաղա-
ղութիւնը ամենեկին չկարենան վերցընել, և թէ
չեզոք կենալու որոշմունքն որ Տանիմարգայի թա-
գաւորին հետ միատեղ ըրած՝ հաստատութեամբ
պիտի պահուի : Ինքը ապահով է թէ Կորուեկիա-
ցիք մեր թագաւորութեան անկախութիւնը ապա-
հովցընելու ու պաշտպանելու համար՝ որ և իցէ
զոհէ ետ չեն կենար :

Անգղիոյ ռուս գեսպանը՝ Պրունով պարոնը՝
Լոնտրայէն կ'ըլլէ :

11. Մեծին Բրիտանիոյ Բեզըրպուրկի Սէյ-
մուր գեսպանը այս ծանուցադիրը կը խաւրէ Գլա-
րէնտըն կոմսին. Ռուս լիազոր անձը՝ արձանագրու-
թեան համար իր շինած ձեւերուն վերջինին մէջ կը
ծանուցանէ թէ Դրան քանի մը այլ և այլ գործ-
քերը, մանաւանդ սուրբ տեղեաց վրայօք ըրած-
ները, Կայսեր երենալով որ իր գաւանած կրօնքին
ընդգէմ են, Կայսրը բռնադատուեցաւ որ սուրբ
տեղեաց վրայօք առանձին կարգաւորութեան մը
հետ խնդրէ յունական եկեղեցւոյն շնորհած
կրօնական իրաւունքներուն, առանձնաշնորհու-
թեանց ու ապահովութիւններուն ընդհանուր
ապահովութիւն մը. հիմա Ռուսաստան այս մէկ
երկու խօսքով կը յայտնէ թէ սուրբ տեղեաց վը-
րայօք ըլլալու առանձին միաբանական գաշնա-
կցութիւնը՝ բոլորովին զատ խնդիր մըն է յունա-
կան եկեղեցւոյն իրաւունքներուն, առանձնա-
շնորհութեանց ու ապահովութիւններուն վրայ
ուղղուած ապահովութիւններէն :

13. Կեսսեղոս կոմսը Մեծին Բրիտանիոյ Բե-
զըրպուրկի գեսպանին կը ծանուցանէ որ այս եր-
կու տէրութեանց մէջ վերաբերութիւնները կրա-
րուած են :

15. Մեծին Բրիտանիոյ Կոստանդնուպոլիս ու-
նեցած գեսպանը՝ լորտ Սգրեզֆըրտ Ռեֆօլէֆ
կը ծանուցանէ Գլարէնտըն կոմսին թէ այն ֆէր-
մանն որ չորս տարի առաջ առաւ, որուն մէջ Տա-
ճիկներուն պէս քրիստոնէից ալ իրաւունք կը
տրուէր Եգիպտոսի առեաններուն մէջ վկայու-
թիւն ընել կարենալու, նոյն ֆէրմանը բոլոր կա-
սերութեան հպատակներուն պիտի տարածուի :

Շիւտէր ռուս փոխանորդ զօրապետը ամսուս
8ին գիշերուընէն ինչուան 9 զարնելով Տաճկի
Դանուբի վրայ ունեցած պղտիկ նաւատորմիդը՝
Ռուսաճուբի մօտ կը խորտակէ զանիկայ :

16. Սէյմուր գեսպանը Գլարէնտըն լորտին
պաշտօնագիր մը կը խրկէ, ուր Ռուսաստանի մէջ
եղած անգղիական հպատակները պատերազմի առ-
թի մէջ պաշտպանելու վրայ կը խօսի :

Սուլթանը ֆէրման մը կը հանէ, որով Էօմէր
փաշան բոլոր Դանուբի բանակին ընդհանուր մեծ
սպարապետ կը հրատարակուի :

Տրուէն տը 1 իւլի իմաց կու տայ Գաղղիոյ Բեզը-

պուրկի գեոպան Գառգեղապատ մարզի զին ու անցագիրներն առնէ ու Բեգրպուրկէն ելլէ :

Բեգրպուրկի լրագիրը հետեւեալ յայտարարու թիւնը կը հրատարակէ . Անգղիոյ ու Գաղղիոյ ար քունեաց իրենց նաւական զորութիւնները Սև ծով մտցընելու որոշմունքը՝ բերնով միայն կայսերական դահլըճին հազորդութեցաւ . բայց մեր պաշտօնէից ու երկու գաշնակից դահլըճներուն մէջ գրուած պաշտօնական ծանուցագիրներէն գուրս կ'ելլէ որ Անգղիոյ ու Գաղղիոյ կառավարութիւնները ոչ միայն միտք ունէին պաշտպանելու Տաճիկները Ռուսի կողմէն եղած ամէն ծովային յարձակմունք ներուն գէմ, այլ նաև անոնց օգնել իրենց նաւահանգիստները պաշար ատենելու, միանգամայն արգիւզելով Ռուսաց որ իրենց նաւահանգիստները պաշար չառնին . միով բանիւ՝ խափանել անոնց Սև ծովուն ջրերուն մէջ ազատ նաւարկութիւնը : Երկու տէրութեանց այս գործունէութիւնը՝ Վայսեր աչքին առջև ոչ միայն ծանր մնաս բերող բան մը կ'երևայ իր իրաւ պատերազմող ունեցած իրաւունքներուն, այլ նաև իրական գործակցութիւն մը պատերազմին : Վայսը հանգիստապէս կը բողբէ այս մնասիս գէմ, ու հիմակուրնէ այնպիսի ճամբու մը ձեռք զգարներ, զորն որ ապագայ գիւտուածները հարկ պիտի ընեն բռնել տալու :

18 . Գլարէնտըն կոմսը այսպէս կը գրէ Ռեսպ. մորլէնա կոմսին ի վէննա . Գոլլորետոյ կոմսը Պոլլ կոմսին մէկ պաշտօնագիրը կարգաց ինծի՝ Օսլոֆ կոմսին վէննա ունեցած պաշտամանը վերաբերեալ . (Տես 4) . Աւստրիոյ կայսրը ոչ երբեք ինքը իրեն ձեռքերը պիտի կապէ չեղող կենալու բացարձակ գաշնագրութեամբ մը քանի որ բաւական ապահովութիւններ չունենայ թէ Եւրոպայի Տաճկաստանին կործանմամբ իր կայսերութեան շահը վտանգի մէջ չիյնար : Թէ որ Ռուսաց կայսրը Դանուբէն ալ անգին պատերազմը սասակութեամբ անցընելու որոշէ, քրիստոնէայ ժողովուրդներու մէկ ապստամբութիւնը անհամար չար հետեանքներ կրնայ ունենալ : Աւստրիա պէտք է որ իր գործելու ազատութիւնը ամբողջ պահէ : Այս պատճառաւ է որ խուճի մը զօրք պատերազմին ասպարիզին մօտ եղած աւստրիական երկրները խաւրուեցաւ . և այս գունդերուն թիւը դեռ կ'աւելնայ, թէ որ գիւտուածները հարկաւոր ընեն անիկայ . և եթէ անհրաժեշտ կարևոր ըլլայ Աւստրիոյ որ զենքով մէջ մանէ, այն ալ այս հաստատուն գիտամբ կ'ըլլայ՝ որ գաշնագրութեանց ձեռքով հաստատուած առջի վիճակը ամէն կողմանէ անարատ պահուի :

21 . Ռուսաց կայսրը ասանկ յայտարարութիւն մը կ'ընէ իր հպատակներուն . Ռուսաստանի գէմ, որ ռազմական համար կը պատերազմի, քրիստոնէութեան թշնամիները Անգղիան ու Գաղղիա ելան . բայց Ռուսաստան պատրաստ է թշնամոյն գիմացը ելլելու այնպիսի արիւթութեամբ մը, որուն օրինակը մեր նախնիքները տուին մեզի : Մենք այսօրուան օրս նոյն ուսու ժողովուրդն ենք՝ ինչ որ 1812 տարւոյն էինք :

22 . Մեծին Բրիտանիոյ Բարիզի գեսպան Գուլլի լորաը հետեւեալ ծանուցագիրը կը խաւրէ Գլարէնտըն կոմսին . Պոլլ-Էալընցայն կոմսը՝ Գաղղիոյ վէննա ունեցած գեսպանը ապահովեցեր է որ եթէ Անգղիա ու Գաղղիա Դանուբէն իշխանութիւնները պարպելու համար սահմանեալ միջոց մը ուղեկան որոշէ, որուն լմընալը նշան մը կ'ըլլայ թշնամութիւնները սկսելու, վէննայի դահլըճը այս առաջարկութիւնը գուրս կը հանէ . Ռուսաց կողմէն մերժումը կամ նոյն իսկ լուծութիւնը իրեն պատերազմի հրատարակում մը սեպուի :

Վաշտ մը անգղիացի զօրք Սառատհմբգընէն ու Լիվըրքուլէն նաւեր կը մանէ արեւելք երթալու համար . ասոնց ընդհանուր գլուխ կը գրուի լորա Ռակլան զօրապետը :

23 . Գաղղիոյ արտաքին գործոց ու ծովային զինուորութեան պաշտօնէայ շրջաբերական մը կը հանէն Գաղղիոյ ամէն քաղաքական գործակալներուն, ծովակալներուն ու նաւական զորութե գլխաւորներուն, որ Ռուսաստանի հետ պատերազմ ընելու առթին մէջ՝ Գաղղիա ու Անգղիա փոփոխակի պաշտպանութիւն ընեն ամէն կողմ երկու տէրութեանց ալ ամէն հպատակներուն ու գրօշակներուն :

Մեծին Բրիտանիոյ արտաքին գործոց պաշտօնէայն ալ իր կողմանէ նոյն պատճառներուն համար նման շրջաբերական մը կը հանէ Անգղիոյ ամէն գեսպաններուն ու հիւպատոսներուն, ծովակալներուն ու գաղթականութեանց կառավարներուն :

Կը շարունակուի :

ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ

Նոր երկային երեւոյթ :

Մօտերս Անգղիոյ Պիտըր-Էդգրիկէմէի քաղաքը երկնային երևոյթ մը երեցաւ, զոր հօու աստղաբաշխը Սքէֆօրթ օրագրին մէջ ստորագրեց : Այս աստղաբաշխին ըսածին նայելով՝ ասիկայ խիստ հետաքրքրական ու զարմանալի մետէորաներէն մէկն է իր ինչուան հիմա գիտածներուն մէջ : Ասոր ձեւը լուսնի պէս բոլորչի էր և արամագիծն ալ գրեթէ լուսնին տրամագծին չափ . իսկ լոյսը այն աստիճանի սաստիկ էր, որ արևուն լոյսէն վար չէր մնար : Այս նորատեսիլ լուսինս գիտաւոր աստեղաց պէս պուշ մըն ալ ունէր, որն որ խիստ լայն էր և լոյսը քիչ մը գեղնորակ : Քառասոր մը տեւեց այս զարմանալի երևոյթս, և անկէջ վերջը ամէն բան աներևոյթ եղաւ առանց մէկ նշանի մը :